Հաստատված է

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական

խորհրդի 2015 թ.-ի հոկտեմբերի 31- ի նիստում

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝

_____Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Քաղաքցիական պաշտպանության շտաբը /այսուհետև՝ ՔՊ շտաբ/ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի /այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ/ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և սույն կանոնադրության հիման վրա:

1.2. ԵՊՀ ԻՄ ՔՊ շտաբը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել մասնաճյուղի տնօրենի ներկայացմամբ՝ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ:

1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԵՊՀ ԻՄ գիտակաբն խորհրդի որոշմամբ:

1.4. ԵՊՀ ԻՄ ՔՊ շտաբն ունի իրեն հատկացված գույք՝ անհատական պաշտպանության միջոցներ, ռադիացիոն դոզաչափման և քիմիական հետազոտության սարքեր, սանիտարական և այլ գույք, որը ԵՊՀ ԻՄ սեփականությունն է: Այդ գույքը բերվում և դրա պահպանությունն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: ՔՊ շտաբն ունի նաև դասասենյակ և գույքի պահպանման սենյակ:

2. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. ԵՊՀ ԻՄ ՔՊ շտաբի խնդիրներն են՝

ա/ արտակարգ իրավիճակներում մասնաճյուղի անձնակազմի և ուսանողների պաշտպանություն,

բ/ ՔՊ կազմավորումների ստեղծում,

գ/ ՔՊ նախապատրաստական միջոցառումների իրականացում, ՔՊ գույքի ձեռքբերում և պատրաստի վիճակում պահում, անձնակազմի և ուսանողների պատսպարման հարցերի լուծում և այլն:

2.2. ԵՊՀ ԻՄ ՔՊ շտաբի հիմնական գործառույթներն են՝

ա/ մասնաճյուղի մասնաճյուղի ՔՊ գծով պլանների մշակում

բ/ ՔՊ պլաններին համապատասխան միջոցառումների մշակում և իրականացում,

գ/ անձնակազմի և ուսանողների կազմավորումների ուսուցման կազմակերպում՝ ՔՊ և ՀՀ ԱԻՎ-ի մասնագետների ներգրավմամբ,

դ/ օրենքով սահմանված այլ գործառույթների իրականացում:

2.3. ԵՊՀ ԻՄ ՔՊ շտաբը, լինելով մասնաճյուղի քաղաքացիական պաշտպանության գործի կազմակերպիչ, ոլորտում իրականացնում է առանձնահատուկ գործունեություն՝ ուսուցման կազմակերպում, կազմավորումների ստեղծում, ՔՊ գույքի ձեռքբերման ուղիների մատնանշում, անձնակազմի և ուսանողների պատսպարման և տարհանման հարցերի ներկայացում և լուծում, ուսումնական վարժանքների պլանավորում և իրականացում և այլն:

3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. ՔՊ շտաբն անմիջականորեն ենթարկվում է մասնաճյուղի տնօրենին

3.2. ՔՊ շտաբը գլխավորում է պետը, որին նշանակում և պաշտոնից ազատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը: ՔՊ շտաբի պետի հետ տնօրենը կնքում է աշխատանքային պայմանագիր, որը հանդիսանում է հիմք՝ հրամանագրելու համար:

3.3. ՔՊ շտաբի պետն իրականացնում է «ՀՀ քաղաքացիական պաշպանության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ, ինչպես նաև կատարում է ՔՊ վերադաս մարմինների կազմակերպական ցուցումները:

3.4. ՔՊ շտաբի պետը պատասխանատվություն է կրում աշխատանքների և գույքի համար: